

ի կրօնակցաց նորին ի նմին ամի. Այս է տապան հոգեւոր Հօրն Բարդէ Գարբիէլին տա Գիւնն Գարգողին ի Գարուչիմից կարգէն, երկրորդ առաքելոյն եւ լուսաւորչի Հայոց ազգին. վերափոխեցաւ ի յայս կենացս լի արդեամբ եւ առաքինութեամբ. ի քու. Տետոն 1668. իսկ Ագարեայ տըւեալ խանին 1200 ոսկի գերծաւ ի ձեռաց նեղչացն»: (Այրարատ, էջ 315-316): Հոս որեւէ յիշատակութիւն չկայ Առաքելի եւ Ազարիայի գործակցութեան մասին, փակուած կամ քանդուած հոռմէադաւաններու եկեղեցւոյն մասին: Յաւալի է որ այս եկեղեցւոյն անունն ալ չի տրուիր, եւ կը յիշուի միայն իբր փակեալ: Առաքել հաւանաբար օգտագործեց փակուած այս դէպքը ուշադրութիւն շահելու համար Հոռմի մէջ, նամանաւնդ նիւթական միջոցներ ձեռք բերելու: Եթէ ան Պապէն նիւթական միջոցներ չէ ստացած այսուհանդերձ ըստացած է Պապական յանձնարարականը որուն կը ցանկար: Պապ Կղեմէս Թ. 13 Փետրուար 1669-ին կը գրէր Շահ Սիւլէյմանի: «Մենք ուղեցինք հետեւի Մեր յարգելի եղբոր Առաքելի, Երեւանի Արքեպիսկոպոսին Մեր մէկ նամակով առ Ձերդ Բարձրութիւնը, խնդրելով որ Դուք յարմար գատէք ցոյց տալու համար ներողութեան եւ բարեսրտութեան նշանները որոնցմով դուք ընդունիք մեզմէ յանձնարարուած անձերը որով կարելի պիտի ըլլայ պահել թէ ինքը եւ թէ միւս կաթոլիկները, իր արքեպիսկոպոսական շրջանին մէջ բնակող, ապահով եւ հաստատ ընդդէմ դաւերու եւ վնասարարութեան հերձուածողներու, որոնք միշտ կը կատարին անոնց դէմ աւելի քան թըշնամութեամբ անոպայ չարակամութեամբ եւ ուր որ անոնք կրնան, նոյնիսկ գործադրելով: Բայց նախ եւ առաջ այս Արքեպիսկոպոսը կը ցանկայ որ իրեն շընորհուի Ձեր Բարձրութիւնէն իրաւունքը Երեւան քաղաքին մէջ եկեղեցի մը շինելու, որ մեծ միսիթարանք եւ հողեկան բարօրութիւն պիտի ըլլայ ապահովաբար այդ կողմերու բոլոր կաթոլիկներուն: Սակայն, եթէ հաճելի պիտի ըլլայ արքայական կամքին ատիկա շնորհել, ատիկան աւելի եւ աւելի իրեն պիտի

կապէ նոր եւ ուժեղ կապով բարի կամեցողութեան Մեր բարձր նկատուած որ արդէն երկար ատենէ ի վեր պարտական էր իր բարեսրտութեամբ... (\*\*)

Առաքել ձեռք բերելով Պապական յանձնարարականը աճապարած չ'երեւուի Իտալիոյ Լուքքա քաղաքը գտնուելը, ինչպէս որ պէտք էր նուիրեալի մը, Պարսկաստան երթալու եւ իր նամակը Շահին ներկայացնելու: 1669-ին կը յիշՍ. Դաւիթ Հայկազնի գերեզմանին ուխտագնացութեամբ: Հեղահեռէ փոխանակ զինքը Երեւանի մէջ ժրաջանօրէն նոր եկեղեցի մը շինելու զբաղմամբ գրտնելու, իրեն կը հանդիպինք... Լոնտոն, նպաստահաւաքութեամբ զբաղեալ: Հըռոմէն մեկնելէ վերջ, որ հաւանաբար 1669 Փետրուարին տեղի ունեցաւ, Առաքելի մասին միայն նոյն տարին Իտալիոյ Լուքքա քաղաքը հանդիպելը գիտենք: Սակայն Առաքելի մասին 1670 Հոկտ. 4-ին Պրուսէլէն Պապական Նըււիբալը Հոռմ կը տեղեկացնէր, որ «Առաքել Հայ Արքեպիսկոպոսը Անգլիա կը գտնուէր, ուր ան շատ յարգալից ընդունելութիւն մը գտած էր շնորհիւ գանազան իշխաններէ իր ստացած յանձնարարական եւ արտօնագիր նամակներով: Նախ ան Ամսդերտամ դնաց նաւ առնելով Արեւելք երթալու համար, սակայն նաւ չգտնելով եւ առիթ ունենալով Լոնտոն անցաւ, ուրտեղի համար իմացեր էր որ նաւ մը կը բեռնաւորուէր այդ կողմերուն (Արեւելքի) համար: Ֆրա Հառուարտ խոհեմութիւն սեպած է օգնել անոր նըկատի ունենալով որ (Առաքել) նամակներ եւ վկայականներ ունէր բերած Հոռմէն եւ այլ տեղերէ, (Ֆրա Հառուարտ) խօսեցաւ անոր (Առաքելի) մասին իբր շատ լաւ մարդ մը, որ գայթակղութեան առիթ չէր տուած այդ մայրաքաղաքին (Լոնտոնի) մէջ, եւ նոյնիսկ անոր ընծայեց հարիւր սգուտի իր անձնականէն, անոր (Առաքելի) ճամբորդութեան օգնելու համար: (Անգլիոյ Չարլզ Բ.) թագաւորը գայն (Առաքելը) ճամբեց յանձնարարական նամակով մը Պարսից Շահին ուղղեալ, եւ Երբէի դուքսը զօրաւոր

(..) Անդ էջ 413: (...) Անդ էջ 414: